

# Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարեր X դասարան

## Պատասխաններ

1.Խաչատուր Աբովյանը եղել է և է՝ հայ ազգային հպարտության հավատավորը՝ Արարատի վերելքի օրերից մինչև մեր օրերը: Նա մեր ազգային հպարտության ներշնչարանն ու ավետարանն է, ով հավատում էր, որ մեր ժողովրդի փառահեղ սկիզբը շարունակվելու է հավերժ: Հայ ազգի զարգացման ու ազատագրության գաղափարը կապելով լուսավորության հետ՝ նա դառնում է ապագա Հայաստանի պատգամախոսը ու ողջակեզը միաժամանակ: «Վերք Հայաստանի» վեպը հայրենասիրության, մարդասիրության, բարոյականության, հավատարմության մատյան է, քանի որ «Մասիս առաջիս էր կանգնած միշտ, որ մատով ցույց էր տալիս, թե ինչ աշխարհքի ծնունդ էմ ես...», «Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսավորիչ՝ քնած տեղս էլ ինձ ասում էին, որ ես իրանց որդին եմ, Հայկա զավակն եմ, Նոյան թողը, Էջմիածնա որդին, դրախտի բնակիչը», «Այժմ և հայսմհետե, մինչև ցօրն հավիտենական՝ Հայաստան», «Չիք իմ այլ նպատակ առաջի, էթե ի հայրենիս մեռանիլ, վասն հայրենյաց մեռանիլ», «Շո՛ւնչդ տուր, հոգի՛ դ, բայց քո հայրենիք մի՛ տար թշնամյաց», «Ձե՛զ եմ ասում, ձե՛զ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնիմ, ձեր արևին դուրբան, տասը լեզու սովորեցեք, ձեր լեզու, ձեր հավատի դայիմ բռնեցե՛ք», «Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն և ու հավատը»: մեջբերված բոլոր մտքերը Աբովյանի թողած պատմության դասերն են, որոնք մեզ դաստիարակում ու ոգեշնչում են, և որոնք պարտավոր ենք սրբությամբ պահելու: «Օրհնվի էն սհաթը, որ ողսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհը մտավ ու ղզլբաշի չար շունչը մեր երկրիցը հալածեց»: Բհարկե, օրհնվի, քանի որ միջնադարյան խավարամտությունից ու ֆիզիկական բնաջնջումից ազատագրված Հայաստանը, թեև ընկավ մի այլ ինքնակալության նոր լծի տակ, այնուամենայնիվ այն ավելի առաջադեմ էր, ավելի քաղաքակիրթ, քան պարսկական խավարամտությունն ու ամենաթողությունը: Մենք իրավունք չունենք պատմական ժամանակից դուրս «դատելու» Աբովյանին, ով Իսահակյանի հրաշալի բնութագրմամբ «Ամեն ինչ էր մեզ համար: Նա ուսուցիչ էր և դաստիարակ, նա հայրենասիրության մեր ներշնչարանն էր: Նա հայության ապագայի խանդավառ պատգամախոսն էր... Աբովյանը մեր նոր պատմության ամենամեծ նահատակն է՝ անթառամ լուսապսակով զարդարված: Նա մեր նոր առասպելն է, ազգային միֆը... բազմախորհուրդ»:

2.Գևորգ Էմինի այս հրաշալի բանաստեղծությունը նվիրված է ազատության երգիչ Միքայել Նալբանդյանին, ով , հիրավի , իր կյանքը զոհեց հանուն ազատության, արդարության և անկախության: Էմինը գրում է «Ազատություն» բանաստեղծության գաղափարական բովանդակությունից ելնելով, միաժամանակ հիշատակելով բանաստեղծի ողբերգական վախճանը՝ զարնանը, երբ զարթնում էր բնությունը, ամենուր կյանքն էր ծաղկում, իսկ վարդ, զարուն, ազատություն սիրող բանաստեղծը մեռնում էր հեռավոր Կամիշլինի մենախցում՝ հիվանդ, լքված, ամբաստանված, բայց հպարտ իր ապրած կյանքով, անպարտելի՝ իր դավանած գաղափարներով: Հայ գրականության ազատության լեզենդի դասերը արդիական են նաև այսօր, այս պահին: «Ազատություն» բանաստեղծությունը Նալբանդյանը գրել է 1859-ին և տպագրել «Հյուսիսափայլ» ամսագրում, որին անդավաճան հավատարմությամբ ծառայում և թղթակցում էր մինչև վերջ: Ազատությունը մարդու բնական վիճակն է՝ տրված Արարչի կողմից: Ցանկացած ոտնձգություն այդ ազատության դեմ աններելի է, և մարդ պետք է պայքարի իր իրավունքների համար: Մա այն անհրաժեշտն է, որի համար մարդը

պատրաստ է չշեղվել, պատրաստ է որդեգրելու այդ գաղափարը որպես գաղափար ու կենսակերպ: Եվ չնայած «ազատություն սիրողին այս աշխարհը խիստ նեղ է», բանաստեղծը պատրաստ է պայքարելու «մինչ ի մահ, կախաղան, մինչև անարգ մահու սյուն»: Նալբանդյանը իր գործով, իր ապրած գեղեցիկ կյանքով դարձավ այդ գաղափարի ջահակիրը, դարձավ ազատության երգիչը:

3. Հայ գրականության ազգային- ազատագրության պայքարի փողհարը գրականություն է մտել բանաստեղծությամբ և ուղեգրություններով, բայց իր հաստատուն տեղը գրավել է որպես պատմավիպասան: Իր գրական կեղծանունը լիովին արդարացնում է իր գրված տեղը՝ Բաֆֆի՝ ուսուցիչ, մարգարե, քարոզիչ: Հրեերեն բաբունի բառից է: Հայոց լեզուն ր-ով սկսվող երկու բառ ունի՝ րոպե և Բաֆֆի. առաջինը՝ ժամանակի նվազագույն միավորն է, երկրորդը՝ այդ ժամանակի հաստատումը՝ պատմության հոլովություն: Բաֆֆին հրաշալի պատմող է, նկարագրող, վերլուծող ու հոգեբան, և նրա գրեթե բոլոր գործերը գրված են այդ սկզբունքով: «Մամվել» պատմավեպը Բաֆֆին գրել է 1886-87թթ.-ին, այն մեծ վիպասանի կարապի երգն է: Տպագրվել է «Արձագանք»-ում: Օգտվել է Փավստոս Բուզանդից և Մովսես Խորենացուց, սակայն շեղվել է Բուզանդի Պատմությունից, որտեղ Մամվելն սպանում է խորթ մորը՝ Որմիգդուխտին, իսկ այստեղ սպանում է հարազատ մորը: Վեպը գրելու շարժառիթը ցարական և թուրքական կառավարությունների վարած հայահալած քաղաքականությունն էր. 1885-ին ցարի հրամանով փակվեցին հայկական դպրոցները, արգելվում էր հայերենով ուսուցումը, ինչպես 4-րդ դարում պարսիկներն էին վարվում հայերի հետ: Թուրք Կարմիր սուլթանը Արևմտյան Հայաստանում կազմակերպում էր հայկական ջարդեր, Հայաստանը չունեի պետություն ու պետականություն, ճիշտ 4-րդ դարի նման, երբ բաժանվել էր Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Պատմավեպը բոցավառեց այն կայծերը, որ սերմանել էին Կարոն, Ֆարհադը, Սագոն և մյուսները:

Երկու Մամիկոնյաններ պայքարում են պետության համար, Վասակ Մամիկոնյանը՝ հայոց լեզենդար սպարապետը, պաշտպանում էր Հայաստանն ու հայոց թագավորին, իսկ Վահան Մամիկոնյանը՝ եղբայրը, ցանկանում էր դառնալ հայոց սպարապետ՝ ավերելով այն երկիրը, որի տերն էր ուզում լինել: Հոր և հորեղբոր գործունեությունը գլխավոր հերոսին մղում են հոգեմաշ մտքերի. «Մամիկոնյանները ծնում են հերոսներ, Մամիկոնյանները ծնում են և դավաճաններ»: Մեր պատմության մեջ կան հակասական կարծիքներ Մամիկոնյանների մասին, և Բաֆֆին, բնականաբար, ծանոթ էր դրանց: Տաղանդավոր վիպասանի գրչի տակ անթույլատրելի (ծնողների սպանությունը) դառնում է հասկանալի և ընդունելի, քանի որ դավաճանությունը աններելի մեղք է, իսկ Մուշեղ Մամիկոնյանի վեհանձն արարքը բացահայտում է հայ ժողովրդի ասպետական, անքեն ոգին՝ անմեղները չեն դատապարտվում: Պատժվում են բոլորը, որովհետև նրանք դատապարտված են անմիաբանության ու ընչաքաղցության դառը կորստյան: Բաֆֆին ակնհայտորեն հասել է իր նպատակին. անգամ օտարները կարող են խոնարհվել մեր ժողովրդի բարձր բարոյականության առջև (Շապուհ և արյաց թագուհի): Չափազանց հոգեբանական են Մամվելի և իր հոր, Մերուժանի և իր մոր հանդիպումները, նրանց պարտությունը, և ուղղակի ցնցող է Մուշեղի հակադիր արարքը՝ ցցի հանել իշխաններին և ազատ արձակել կանանցը: Վահան Մամիկոնյանի փիլսոփայությունը պարզում է շատ բան. «Կյանքի մեջ, մանավանդ պետությունների կյանքի մեջ, լինում են այնպիսի դառն հանգամանքներ, երբ հայր, մայր, քույր, եղբայր, օտար՝ բոլորը հավասար են և պատժվում են հավասար...»: Բաֆֆին համոզված է, որ հայրենիքը անհամեմատելի ու բացարձակ արժեք է, և ամեն ոտնձգություն ու դավաճանություն պետք է պատժվի:

4. Այս հարցի պատասխանը պետք է գրի մասնակիցը:

## **Գնահատման չափանիշներ**

1-ին հարց

Ենթահարցեր՝ 1-2 միավոր, 2 -1 միավոր, 3 - 2 միավոր

2-րդ հարց

Ենթահարցեր՝ 1-1 միավոր, 2 - 3 միավոր, 3 – 1 միավոր

3-րդ հարց

Ենթահարցեր՝ 1-2 - 0,5 ական միավոր, 2 – 3 միավոր, 3 - 1 միավոր

4-րդ հարց - 5 միավոր

**Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան**